Յօհաննէս Զմշկիկն 'ի Զմշկածկոյ 'ի Թըուրին Հայոց ՆԺԸ. ամին գնացեալ 'ի Կոստանդնուպօլիս՝ եմուտ 'ի ծառայութիւն Թագաւորին Նիկիփօռայ: Նա յաւուր միում սպան զմի 'ի ծառայակցաց իւրոց, և Թագաւորն բարկացեալ աքսորեաց զնա 'ի կղզի ինչ. և զի էր Զմշկիկն անձնեայ և գեղեցիկ, զոր տարփացեալ Նմա Թագուհին՝ առաքեաց զոմն և եբեր 'ի ծածուկ զԶմշկիկըն 'ի պալատն իւր. և ասէ ցնա, եթէ սպանանես զՆիկիփօռոս, ես եղեց քեզ կին, և Թագաւորեցուցից զքեզ. և ասէ Զըմըշկիկն, զի՞արդ կարեմ սպանանել զայր Թագաւոր. և ասէ Թագուհին, ես ուսուցից քեզ: Նա յերեկոյին մինչ Նստէր Թագաւորըն առանձին՝ և ընթեռնոյր զԱստուածային գիրսն, եկն առ Նա Թագուհին, և շաղապատեցաւ զնովաւ. 'ի ծածուկ պինդ կապեաց փոկովն զԹուրն Թագաւորին՝ և գնաց: Նա ասէ ցԶմշկիկն, Երթ աներկիւղ և սպան զնա. և վազեաց Զմշկիկն յանկարծակի 'ի վերայ Թագաւորին. զոր տեսեալ

Հայ մատենագրութեան թուանշային գրադարան